Եւ առհասարակ մարմնափոխութեան հաւատը շատ է մեղմացնում մահւան մեծ վիշտը. այսպէս, դեռատի մայրը կորցնելով երեխային՝ մխիթարւում է այն մտքով, որ նա նորից իրան է վերադառնալու մահւան խաւարից մի նոր մարմնով: Երեխայի թաթի մէջ նա գրում է նրա անւան սկզբնատառը եւ նոր երեխայ ունենալիս, որոնում է իր գրած խորհրդաւոր նշանը նրա ափի մէջ եւ անպայման հաւատում է, որ իր մեռած երեխայի հոգին է վերադարձել իրան, իր մայրական սիրտը սփոփելու համար (Lafcadio Hearn):

Հասարակ ժողովուրդը հաւատում է նոյն իսկ կենդանիների հոգեփոխութեանը: Գիւղացին իր եզը թաղելու ժամանակ ջերմ աղօթքներ է ուղղում աստուածներին, որ նրա յաջորդ կեանքը այնքան էլ ծանր չը լինի:

Նա հաւատում է որ մինչեւ անգամ անշունչ առարկաները երկար գոյութիւնից յետոյ ընդունակ են հոգի ստանալու:

Այս բոլորի մէջ արտացոլում է ճապոնացու քնքոյշ սէրը դէպի իր շրջապատը եւ դէպի ամեն բան, ինչ ապրում է: Դա վերին աստիճանի հասցրած մարդկայնացում է, ուր չկայ մարդու այն գոռոզ, յաճախ կոպիտ մեծամտութիւնը, թէ ինքն է միայն կանգնած տիեզերքի կենդրոնում, եւ թէ մնացած ամեն-ինչ միայն իր համար է ստեղծւած: